ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝
08.04.2015Թ.
ԹԻՎ 11-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԸ

1. Սահմանել համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար, յուրաքանչյուր համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ մինչև 10.0 տոկոս չափով հավելավճար:
2. Սահմանել համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների տվյալ աշխատակազմում ունեցած երկար տարիների / առնվազն հինգ տարի / աշխատանքային ստաժի համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ մինչև 10.0 տոկոսի չափով հավելավճար:
3. Պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարը տրվում է յուրաքանչյուր համայնքային ծառայողին ընդունող և ազատող իրավասություն ունեցող պաշտոնատար անձը համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի ներկայացմամբ: